

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ**

Արտակ Ձեյնալյան

**ՄԻԵԴ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ 2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍ 1

Կոնվենցիայի և ՄԻԵԴ որոշումների սահմանադրաիրավական կարգավիճակը, Կոնվենցիայի հիմնարար սկզբունքները.....

Թեմա 1. Կոնվենցիայի և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի սահմանադրաիրավական կարգավիճակը

Թեմա 2. ՄԻԵԴ գործունեության հմնացաբանական հիմունքները. Կոնվենցիայում օգտագործվող հասկացությունների և եզրույթների ինքնավար բնույթը, վարչական վարույթն այլ վարույթներից տարանջատելու սկզբունքները, իրավունքի կիրառման փուլերը. օրենքի որակի ստուգման թեստը

ԴԱՍ 2

Վարչական արդարադատությունում Կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության իրավունքի իրացման երաշխիքները

Թեմա 1. Կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության իրավունքի ինքնավար մեկնաբանությունը

Թեմա 2. ՄԻԵԴ նախադեպային իրավունքում և Եվրախորհրդի այլ փաստաթղթերում ամրագրված դատական ակտերի պատճառաբանվածությանը և հիմնավորվածությանը ներկայացվող պահանջները և դրանց ապահովումը վարչական արդարադատությունում.....

ԴԱՍ 3

Կոնվենցիայով երաշխավորված նյութական իրավունքների ապահովման վարչադատավարական երաշխիքները. սեփականության իրավունք

Թեմա 1. Կոնվենցիայով երաշխավորված սեփականության իրավունքի ապահովման վարչադատավարական երաշխիքները աշխատանքային հարաբերությունների ոլորտում

Թեմա 2. Սեփականության իրավունքի ապահովման վարչադատավարական երաշխիքները հարկային և մաքսային հարաբերությունների ոլորտում.....

ԴԱՍ 4

Կոնվենցիայով երաշխավորված նյութական իրավունքների ապահովման վարչադատավարական երաշխիքները. անձնական կյանքի հարգանքի իրավունքը և մտքի, խղճի, կրոնի ազատությունը

Թեմա 1. *Կոնվենցիայով երաշխավորված անձնական կյանքի հարգանքի իրավունքի ապահովման վարչադատավարական երաշխիքները.....*

Թեմա 2. *Կոնվենցիայով երաշխավորված մտքի, խղճի, կրոնի ազատության ապահովման վարչադատավարական երաշխիքները ...*

ԴԱՍ 5

Կոնվենցիայով երաշխավորված նյութական իրավունքների ապահովման վարչադատավարական երաշխիքները. խոսքի, խաղաղ հավաքների և միավորումների ազատություն, խտրականության արգելքը

Թեմա 1. *Կոնվենցիայով երաշխավորված խոսքի, խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների ապահովման վարչադատավարական երաշխիքները*

Թեմա 2. *Կոնվենցիայով երաշխավորված խտրականության արգելքի ապահովման վարչադատավարական երաշխիքները.....*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

ԴԱՍ 1

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ՄԻԵԴ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿ- ՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Թեմա 1. Կոնվենցիայի և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի սահմանադրաիրավական կարգավիճակը

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) իր կից արձանագրություններով վավերացվել է 2002 թ. ապրիլի 26-ին: Նույն այդ ակտով Հայաստանի Հանրապետությունը ընդունել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ) պարտադիր իրավագրությունը: Սա Կոնվենցիայի վավերացման պայմաններից մեկն է, որն արտահայտված է Կոնվենցիայի 46-րդ հոդվածում, ըստ որի՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են կատարել դատարանի վերջնական վճիռները դատարանի ցանկացած գործերի վերաբերյալ, որոնցում նրանք կողմեր են»: Մինչդեռ, Կոնվենցիայի նախկին տեքստում, որն ուժի մեջ էր մինչև թիվ 11 արձանագրության ուժի մեջ մտնելը, 46-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ յուրաքանչյուր Բարձր պայմանավորվող կողմ ցանկացած ժամանակ կարող էր հայտարարություն անել այն մասին, որ նա *ispo facto* և առանց հատուկ համաձայնության ճանաչում է դատարանի պարտադիր իրավասությունը Կոնվենցիայի դրույթների մեկնաբանմանը և կիրառմանը վերաբերող հարցերի նկատմամբ: Այս դրույթից բխում էր, որ ՄԻԵԴ վճիռների և դրանցում արտահայտված դիրքորոշումների պարտադիր լինելը պայմանավորված էր համապատասխան հայտարարություն արած լինելու, այլ ոչ թե Կոնվենցիայի վավերացման փաստի ուժով: Մինչդեռ թիվ 11 արձանագրության ներմուծումից հետո վճիռների կատարման պարտադիրության հարցը հավաքական կերպով (վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները ընդունելու հարցը ինկորպորացնելով վճռի կատարման հարցի մեջ) ուղղակիորեն և բացառապես կապվեց փաստաթուղթը վավերացնելու փաստի հետ:

Ըստ այդմ, ՀՀ-ն՝ որպես սուվերեն պետություն, համաձայնվեց իր օրենքների ու դատական ակտերի վրա տարածել Եվրոպական դատա-

րանի վերահսկողությունը և պարտավորվեց փոփոխել կամ վերացնել այն օրենքները և ներպետական պրակտիկան, որոնք հակասում են Կոնվենցիայի պահանջներին և Եվրոպական դատարանի որոշումներին:

Վավերացումից ի վեր ՀՀ-ի դեմ այս պահի դրությամբ կայացվել են հիսունից ավելի վճիռներ (ինչպես նաև մի շարք որոշումներ, որոնք նույնպես ունեն նախադեպային նշանակություն, որոնց արդյունքում փոփոխության են ենթարկվել բազմաթիվ օրենսդրական ակտեր, ինչպես նաև վերանայվել է տասնամյակների ընթացքում կիրառվող դատական ու վարչական պրակտիկան: Օրինակ՝ ՄԻԵԴ որոշումների արդյունքում էապես բարեփոխվել են դատական նիստերի մասին կողմերին պատշաճ ծանուցելու ինստիտուտը (Nikoghosyan and Melkonyan v. Armenia, 06/12/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 11724/04; 13350/04), դատական տուրքի վճարումը հետաձգելու մասին օրենսդրական կարգավորումը (Paykar Yev Haghtanak Ltd v. Armenia, 20/12/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 21638/03), ռադիոհեռուստատեսային հաղորդումների լիզենզավորման մրցույթում կարգավորող մարմնի կողմից իր որոշումները պատճառաբանելու օրենսդրական հիմքերը (Meltex Ltd and Mesrop Movsesyan v. Armenia, 17/06/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 32283/04), էապես բարեփոխումների է ենթարկվում քրեական դատավարության համակարգը, և նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը ԵԽ նախարարների կոմիտեի կողմից ներառված է ՄԻԵԴ մի շարք վճիռների կատարման ծրագրում: Ավելին, բարեփոխումները իրականացվում են ոչ միայն ՄԻԵԴ վճիռների միջոցով, այլ նաև ԵԽ քաղաքական մարմինների ընդունած քաղաքական բնույթի որոշումներով, որոնք նույնպես արտահայտում են Կոնվենցիայի սկզբունքները: Օրինակ՝ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը էական բարեփոխումների ենթարկվեց (սահմանվեցին այլընտրանքային զինվորական և այլընտրանքային աշխատանքային բնույթի ծառայություններ) ԵԽ մոնիթորինգային մարմինների պահանջի ներքո: Նույնը կարել է ասել նաև «Հանրահավաքների, ժողովների, երթերի և ցույցերի անցկացման մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, որը տարիներ շարունակ փոփոխությունների էր ենթարկվում՝ համաձայն Վենետիկի հանձնաժողովի առաջարկությունների: ԵԽՏՎ-ն 2002–2005 թթ. ընթացքում առնվազն երեք բանաձ-

ևերի միջոցով ՀՀ իշխանություններից հետևողականորեն պահանջում էր վերացնել վարչական կալանքի պրակտիկան և դրա օրենսդրական հիմքերը, և նույնիսկ մեկ անգամ ՀՀ-ին զգուշացվել է նրա ԵԽ անդամության ստեղծման հնարավորության մասին, և միայն 2005 թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումների արդյունքում վարչական կալանքի հիմքերը ամբողջությամբ վերացվեցին օրենսդրությունից:

Վերը նշված օրինակների հիման վրա կարելի է պնդել, որ գործում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված սկզբունքը, համաձայն որի՝ «եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքով, ապա կիրառվում են այդ նորմերը»: Այսինքն՝ Կոնվենցիայի դրույթները գերակա են ՀՀ օրենքների նկատմամբ, և մենք տեսնում ենք դրա հետևողական կիրառումը:

Վերը նշվածը կարելի է պնդել ոչ միայն Կոնվենցիայի դրույթների, այլ նաև ՄԻԵԴ վճիռների և որոշումների առնչությամբ, քանի որ դրանք Կոնվենցիայի մեկնաբանության հիմնական, եթե ոչ միակ, աղբյուրներն են: Հետևաբար, սկզբունքորեն որևէ տարբերություն չկա, երբ վկայակոչվում է Կոնվենցիայի որևէ դրույթ կամ ՄԻԵԴ որևէ վճիռ Կոնվենցիայի դրույթը մեկնաբանելու նպատակով: Բացի այդ՝ ՀՀ-ն պատկանում է այն երկրների թվին, որոնք, քաղաքական կամք ու Կոնվենցիայի սկզբունքներին հավատարմություն դրսևորելով, հստակորեն ամրագրել են իրենց օրենսդրության մեջ ՄԻԵԴ վճիռների գերակայության սկզբունքը դատական ակտերի նկատմամբ: Այսպես, Դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը նշում է, որ նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Եվրոպական դատարանի որոշումներում արտահայտված հիմնավորումները պարտադիր են ազգային դատարանների համար: Քիչ պետություններ կան, որոնք նման դրույթ ունեն իրենց ազգային օրենսդրության մեջ: Այս դրույթը գործում է հետևողականորեն: ՀՀ վճռաբեկ դատարանը այս դրույթի հիման վրա ստեղծել է բազմաթիվ նախադեպային նշանակություն ունեցող որոշումներ, իսկ վերաքննիչ և առաջին ատյանի դատարանները իրենց որոշումներում հետևողականորեն և պարբերաբար վկայակոչում են ՄԻԵԴ որոշումներում արտահայտված Կոնվենցիայի մեկնաբանությունները: Կարելի է

որպես օրինակ բերել որոշ ոլորտներ, որոնք մեծ մասամբ կառուցվել են Կոնվենցիոն սկզբունքների հիման վրա՝ ըստ ՄԻԵԴ որոշումներում արտահայտված դիրքորոշումների: Օրինակ՝ 2010 թ. մայիսին ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի ներմուծմամբ սկիզբ դրվեց վիրավորանքի ու զրպարտության գործերով դատական պրակտիկային, որը հետագայում, ինչպես զարգացումները ցույց տվեցին, կառուցվեց վճռորոշ մասով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիման վրա՝ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշման և Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների միջոցով: Այս մասին հանգամանորեն ներկայացված է առցանց միջոցներով հրապարակված մի ձեռնարկում (*Ա. Ղազարյան, Ա. Ջեյնայան, Ձեռնարկ լրագրողների և փաստաբանների համար, Երևան, 2015*), որտեղ մանրամասնորեն վերլուծված է նշված պրակտիկան:

Այսպիսով՝ Կոնվենցիան և դրա մեկնաբանման հիմնական աղբյուր հանդիսացող ՄԻԵԴ որոշումները գերակա են ՀՀ օրենքների ու դատական ակտերի նկատմամբ, և դրանց միջև հակասության դեպքում առաջինները գերակայում են: Այլ կերպ ասած, ՀՀ օրենսդրական ու դատական ակտերի նկատմամբ գործում է Կոնվենցիայի և ՄԻԵԴ վերահսկողությունը: Այս կերպ՝ ՀՀ օրենքները և ներպետական պրակտիկան համապատասխանեցվում են Կոնվենցիայի եվրոպական չափանիշներին: Այս պրոցեսն ընթանում է 2002 թ. ապրիլից:

Վերը նշված օրինակները ցույց են տալիս, որ եվրոպական վերահսկողությունը ՀՀ օրենքների ու ներպետական պրակտիկայի նկատմամբ գործում է և՛ ուղղահայաց, և՛ հորիզոնական եղանակով: Այսինքն՝ ՄԻԵԴ կոնկրետ վճիռը ծառայում է տվյալ անձի խախտված իրավունքների վերականգնման համար, բայց միևնույն ժամանակ կոնկրետ վճիռը ունենում է նաև հորիզոնական հետևանք. հիմք դառնում պետության ներսում այնպիսի բարեփոխումներ կատարելու համար, որ նման խախտումներ չկրկնվեն նաև այլոց նկատմամբ: Ավելին, ՄԻԵԴ վճիռների հորիզոնական կիրառումը կատարվում է ոչ միայն ՄԻԵԴ-ի կողմից, այլ նախ և առաջ և առավել հետևողականորեն, լայնորեն ու խորությամբ կիրառվում է Վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական աստիճանի կողմից: Եթե 2002 թվականից մինչև 2015 թվականի սկիզբը

ՄԻԵԴ–ը կայացրել է ընդամենը 52 վճիռ, Վճռաբեկ դատարանը 2006 թվականից առ այսօր կայացրել է հարյուրավոր վճիռ, որոնցում բազմակի հղումներ են արվել ՄԻԵԴ վճիռներին: Ավելին, Վճռաբեկ դատարանի յուրաքանչյուր որոշում Դատական օրենսգրքի 15–րդ հոդվածի 4–րդ մասի ուժով ճյուղային ազդեցություն ունի, քանի որ դրանք արագորեն ընդունվում ու կիրառվում են ողջ դատական համակարգի կողմից այլ գործերով՝ այդպիսով և զարգացնելով իրավակիրառ պրակտիկան և նպաստելով օրենսդրական բարեփոխումների: Վերջինի առումով որպես օրինակ կարելի է բերել անձի ձերբակալման ու կալանքի տակ պահելու կոնվենցիոն սկզբունքները, որոնք ներկայումս ամրագրված են նոր Քրեական օրենսգրքի նախագծում: Չնայած վերջինս դեռևս չի ընդունվել, սակայն վերոնշյալ սկզբունքների կիրառումը սկսվել է առնվազն 2010 թվականից, որոնց շարունակական ազդեցության տակ էլ հենց այդ սկզբունքները ներմուծվեցին քրեական դատավարության դաշտ (օրինակ՝ Վճռաբեկ դատարանի որոշումները՝ Ասլան Ավետիսյանի, Գագիկ Միքայելյանի, Վահրամ Գևորգյանի գործերով):

Վերը նշվածից հարց է բարձրանում, թե ինչպես են հարաբերակցվում Կոնվենցիան և ՀՀ Սահմանադրությունը: Ուսումնասիրելով տարբեր պետությունների սահմանադրական դրույթները, որոնցով կարգավորվում է ՄԻԵԿ–ի և տվյալ պետությունների սահմանադրությունների հարաբերակցումը, կարելի է արձանագրել ազգային սահմանադրության և Կոնվենցիայի միջև փոխհարաբերությունների հետևյալ եղանակները.

- Որոշ պետություններում սահմանադրությունները սահմանադրական կարգավիճակ են տալիս ՄԻԵԿ–ին: Այդ պետություններից են Ավստրիան և Նիդերլանդները: Կարելի է ասել, որ սրանք մոնիստական սկզբունք որդեգրած պետություններ են, համաձայն որի՝ այս պետությունները նույնականացնում են ազգային իրավունքը միջազգային իրավունքի հետ և այդ պատճառով գտնում են, որ միջազգային իրավական փաստաթուղթը վավերացնելու որևէ քայլ անհրաժեշտ չէ կատարել:

- Որոշ պետություններում ՄԻԵԿ–ին տրվում է վերօրենսդրական կարգավիճակ: Այդպիսի պետություններ են, օրինակ, Ֆրանսիան, Բելգիան, Իսպանիան, Պորտուգալիան, Լեհաստանը:

- Որոշ պետություններում ՄԻԵԿ-ին տրվում է օրենսդրական կարգավիճակ, ինչպես, օրինակ, Մեծ Բրիտանիայում, որտեղ Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1998 թ. ընդունված առանձին օրենքով, կամ Գերմանիայում, որտեղ ՄԻԵԿ-ն ունի դաշնային օրենքի կարգավիճակ: Գերմանիայի սահմանադրական դատարանը եզրակացրել է, որ ընդհանուր իրավասության դատարանները պետք է ՄԻԵԿ-ը դիտարկեն և կիրառեն նույն կերպ, ինչ դաշնային օրենքները, ընդ որում՝ «մեթոդաբանորեն հիմնավորված մեկնաբանության» միջոցով: Սահմանադրական դատարանը միաժամանակ նշել է, որ.
- Սահմանադրական դատարան ներկայացրած սահմանադրական գանգատում չեն կարող ուղղակիորեն վկայակոչվել ՄԻԵԿ-ում նախատեսված մարդու իրավունքների խախտումները:
- ՄԻԵԿ-ի երաշխիքներն ազդում են հիմնական իրավունքների և ներպետական հիմնական օրենքից բխող սահմանադրական սկզբունքների մեկնաբանության վրա,
- ՄԻԵԿ-ը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը սահմանադրական մակարդակում ծառայում են որպես մեկնաբանական ուղեցույց հիմնական օրենքում հիմնարար իրավունքների և հանրային իրավունքի սկզբունքների ազդեցության բովանդակության և չափերի համար:

Համեմատելով վերը նշված Գերմանիայի օրինակի հետ՝ կարելի է պնդել, որ ՀՀ-ում Սահմանադրության և Կոնվենցիայի հարաբերակցումը հարում է վերը նշված երկրորդ մոդելին, ըստ որի՝ Կոնվենցիային տրված է վերօրենսդրական կարգավիճակ (Սահմանադրության 6-րդ հոդվածի ուժով): Միևնույն ժամանակ, երբ հարց է բարձրանում, թե արդյոք Կոնվենցիան գերակայում է Սահմանադրությանը, թե ոչ, նման հարցին պետք է պատասխանել, որ Կոնվենցիան չի կարող գերակայել Սահմանադրությանը, և որ լավագույն դեպքում այն լրացնում է Սահմանադրությանը: Ավելին, բազմաթիվ են օրինակները, երբ ՀՀ Սահմանադրությունը սահմանում է առավել բարձր չափանիշներ, քան Կոնվենցիան (օրինակ՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու իրավունքը 16-րդ հոդվածի ներքո, որի առումով Կոնվենցիան այդ իրավունքը սահմանում է միայն հան-

ցագործության կատարման ողջամիտ կասկածի հիման վրա ձերբակալված անձանց առնչությամբ, իսկ Սահմանադրության 16-րդ հոդվածը՝ ցանկացած հիմքով ազատությունից զրկված անձանց առնչությամբ):

Թեմա 2. ՄԻԵԴ գործունեության իմացաբանական հիմունքները. Կոնվենցիայում օգտագործվող հասկացությունների և եզրույթների ինքնավար բնույթը, վարչական վարույթն այլ վարույթներից տարանջատելու սկզբունքները, իրավունքի կիրառման փուլերը. օրենքի որակի ստուգման թեստը

Ներպետական օրենսդրության ու դատական պրակտիկայի նկատմամբ եվրոպական կոնվենցիոն վերահսկողությունը իրականացվում է **սուբսիդիարության** սկզբունքի հիման վրա: Այս սկզբունքը ենթադրում է, որ Կոնվենցիան և իր վերահսկողական մեխանիզմները (Եվրոպական դատարանը, ԵԽ կոմիտեները, հանձնաժողովները) օժանդակ կառույցներ են ազգային իրավական կառուցակարգերի նկատմամբ, որից հետևում է, որ հիմնականում Կոնվենցիայով ամրագրված իրավունքների և ազատությունների ապահովումը մասնակից պետությունների ազգային իշխանությունների խնդիրն է: Այս սկզբունքի կիրառությունը պրակտիկայում մի շարք հետևանքներ է թողնում: Օրինակ՝ ՄԻԵԴ-ը, ելնելով սուբսիդիարության սկզբունքից, երբեք չի ապավինում ապացույցների գնահատման, ապացույցների ընդունելիության հարցերի որոշման լիազորություններին: Ըստ ՄԻԵԴ-ի՝ դա ազգային սուվերեն համակարգի խնդիրն է: Վճիռների կատարման վարույթում Նախարարների կոմիտեն վճիռների կատարման մեխանիզմները որոշելու առաջնահերթությունը, որպես կանոն, նույնպես տալիս է պետությանը (գործողությունների ծրագիրը մշակում է պետությունը), իսկ Նախարարների կոմիտեն տալիս է իր հավանությունը և ստուգում, թե արդյոք պետության նախանշած քայլերը կատարվում են, թե ոչ: Սուբսիդիարության սկզբունքը թույլ է տալիս ԵԽ-ին համագործակցել ինքնիշխան պետությունների հետ, որոնք թեև կամովին իրենց սուվերենության մի մասը հանձնել են միջազգային մարմին, սակայն մնում են միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ և այդ իմաստով ունեն մարդու իրավունքների վերաբերյալ հարցերը լուծելու առաջնահերթություն: Ինչպես հաճախ կրկնում է

Եվրոպական դատարանը իր որոշումներում, եվրոպական վերահսկողությունը քայլում է ձեռք ձեռքի տված ազգային համակարգի հետ:

Բացի սուբսիդիարության սկզբունքից՝ կան մի շարք այլ սկզբունքներ, որոնք իրենց բնույթով ունիվերսալ են և ընկած են Կոնվենցիայով սահմանված բոլոր իրավունքների կիրառության հիմքում: Օրինակ՝ **հայեցողության** սկզբունքը, որը բխում է սուբսիդիարության սկզբունքից, համաձայն որի՝ պետություններին տրվում են հայեցողության դաշտ որոշելու համար անձի իրավունքները սահմանափակելու անհրաժեշտությունը և եղանակները: Կախված գործի բնույթից՝ հայեցողության շրջանակները կարող են լինել լայն կամ նեղ: Համապատասխանաբար, եվրոպական վերահսկողության շրջանակները նույնպես կարող են լինել լայն կամ նեղ՝ կախված հայեցողության շրջանակից: Օրինակ՝ ազգային անվտանգության գործերով ՄԻԵԴ վերահսկողությունը նեղ է, քանի որ ազգային մարմիններին տրված հայեցողության շրջանակը լայն է: Ազատ խոսքի հիմքով գործերում հայեցողության շրջանակները նեղ են, հետևաբար ՄԻԵԴ վերահսկողության շրջանակները լայն են, որից էլ և կախված է որոշում կայացնելու ելքը:

Համաչափության սկզբունքը ընդհանուրի շահի՝ «համայնքի ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռության որոնումն է»: Համաչափության սկզբունքը գործում է «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» չափանիշի հետ (բառացիորեն ամրագրված Կոնվենցիայի 8–11–րդ հոդվածներում), որն, ի դեպ, ամրագրված է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի ընդհանուր սկզբունքներում:

Կարևոր հիմնարար սկզբունքներից է նաև Կոնվենցիայի մեկնաբանության՝ «կենդանի իրավական փաստաթուղթ» սկզբունքը, համաձայն որի՝ Կոնվենցիայով սահմանված արտահայտությունները պետք է մեկնաբանվեն ներկա պայմանների, ներկա հասարակական զարգացումների լույսի ներքո, այլ ոչ թե այն պահի դրությամբ, երբ տեղի են ունեցել գործով դեպքերը (կիրառվեց Bayatyan v. Armenia, 07/07/2011 թ. ՄԵԾ պալատի վճիռ, գանգատ թիվ 23459/03 գործով):

Կոնվենցիայի մեկնաբանության սկզբունքներից կարևոր է նաև ինք-

նավար մեկնաբանության սկզբունքը. համաձայն որի՝ Կոնվենցիայով սահմանված շատ արտահայտություններ մեկնաբանվում են ինքնավար կերպով՝ անկախ նրանից, թե տվյալ արտահայտությունը ինչպես է մեկնաբանվում ազգային օրենսդրական համակարգում կամ դատարանների կողմից: Մեկնաբանության այս եղանակը կիրառվել է ՀՀ-ի դեմ կայացված բազմաթիվ վճիռներում, օրինակ՝ վարչական կալանքի գործերով վճիռներում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում նշված «քրեական մեղադրանք» հասկացությունը (Galstyan v. Armenia, 15/11/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 26986/03), թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածում նշված «գույք» հասկացությունը (Minasyan and Semerjyan v. Armenia, 23/06/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 27651/05):

ԴԱՍ 2

ՎԱՐՉԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑ- ՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Թեմա 1. Կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության իրավունքի ինքնավար մեկնաբանությունը

Վարչական արդարադատությունում Կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության իրավունքի մասին խոսելիս նախ և առաջ կարևոր է հիշել, որ 6-րդ հոդվածը չի տարածվում վարչական դատավարությունների նկատմամբ: Հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությունը սահմանում է սույն հոդվածի դիսպոզիցիան, ըստ որի՝ արդար դատավարության իրավունքը կիրառելի է այն անձանց նկատմամբ, ում առաջադրվել է մեղադրանք (այսինքն՝ քրեական դատավարության նկատմամբ), և այն անձանց նկատմամբ, ում քաղաքացիական իրավունքների և պարտականությունների մասին հարց է լուծվում տվյալ դատավարության շրջանակներում (այսինքն՝ քաղաքացիական դատավարության նկատմամբ): Կոնվենցիայի հիմնադիրների նպատակների մեջ չէր մտնում Կոնվենցիայի արդար դատաքննության երաշխիքների տարածումը նաև այնպիսի դատավարությունների նկատմամբ, որի շրջանակներում վիճարկվում էին հանրային իրավահարաբերություններ: Այս առումով անհրաժեշտ է տարբերակում անցկացնել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի հետ, որը դատարանի իրավունքը սահմանում է յուրաքանչյուրի համար՝ անկախ դատավարության բնույթից:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է հիշել նաև, որ հաճախ ազգային օրենսդրությամբ վարչական բնույթի դասակարգված դատավարությունը կարող է անցնել 6-րդ հոդվածի քրեական կամ քաղաքացիական բնույթի վարույթներից որևէ մեկի պաշտպանության տակ՝ կախված այն հանգամանքից, թե արդյոք ինքնավար մեկնաբանության ուժով անձի նկատմամբ վարչական տույժը կարող է մեկնաբանվել որպես քրեական մեղադրանք, թե ոչ, կամ կախված այն հանգամանքից, թե արդյոք տվյալ վարչական վարույթի շրջանակներում անձի քաղաքացիական իրավունքների կամ պարտականությունների մասին հարց է լուծվում:

Այսպես, ՀՀ-ի դեմ կայացված վարչական կալանքի գրեթե բոլոր գործերով հայցվորները ներկայացրել էին նաև 6-րդ հոդվածի հիմքով պնդումներ: ՄԻԵԴ-ը դրանք *ratione materie* հիմքով ընդունելի համարեց՝ գտնելով, որ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի համապատասխան նորմերը (օր.՝ 172-րդ, 176-րդ, 180-րդ հոդվածները) իրենց բնույթով հետապնդում էին անձին պատժելու նպատակ, ինչպես նաև սահմանելով, որ ազատագրվումը (3 օրից մինչև 15 օր)՝ որպես տույժի տեսակ, իրականում հետապնդում էր քրեական նպատակ: Նշված երկու հիմքերով դատարանը եզրակացրեց, որ սահմանված վարչական տույժը իրականում Կոնվենցիայի իմաստով հավասարազոր էր առաջադրված քրեական մեղադրանքի, ու այս հիմքով որոշեց ընդունելի համարել դիմումները՝ ըստ 6-րդ հոդվածի 1-ին մասի առաջին բաժնում սահմանված «քրեական մեղադրանք» հասկացության իմաստի (տես, օրինակ, Galstyan v. Armenia, 15/11/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 26986/03): Ընդունելի համարվեց նաև Paykar Yev Haghtanak Ltd v. Armenia, 20/12/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 21638/03 գործով դիմումը, որտեղ դատավարությունը, ՀՀ դատավարական իրավունքի համաձայն, իր բնույթով վարչական էր և ընթանում էր հարկային մարմնի և իրավաբանական անձի միջև: Այդուհանդերձ, ինքնավար մեկնաբանության ուժով ՄԻԵԴ-ը որոշեց, որ չվճարված հարկերի դիմաց իրավաբանական անձի նկատմամբ սահմանված հավելյալ տույժերն ու տուգանքները այն աստիճանի խիստ էին իրենց բնույթով, որ Կոնվենցիայի իմաստով քրեական մեղադրանք էին ներկայացնում:

Նման օրինակներ կարելի է բերել նաև քաղաքացիական իրավունքների առումով: Որպես կանոն, դժվարություններ են առաջացնում այն վեճերը, որոնք հանրային իրավունքի ոլորտին են պատկանում, կամ այն վեճերը, որտեղ դատավարության կողմը վարչական մարմին է, դատավարությունը ընթանում է վարչական դատարանում և վարչական դատավարության կարգով, սակայն վեճի առարկան բախվում է անձի իրավունքների կամ պարտականությունների հետ:

Ringeisen v. Austria, 16/07/1971 թ. վճիռ, գանգատ թիվ 2614/65 գործով իր կայացրած վճռում Եվրոպական դատարանը 6-րդ հոդվածի 1-ին մասի «քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ»

հասկացությանը լայն իմաստ տվեց: 6-րդ հոդվածի կիրառելիության վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մեծապես զարգացել է այն գործերով, որոնք ներառում են հանրային իրավունքին բնորոշ որևէ մի տարր: Դատարանը որոշել է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառվում է անկախ կողմերի կարգավիճակից կամ վեճը կարգավորող օրենսդրությունից: Կարևորը հարցին առնչվող իրավունքի բնույթն է և այն փաստը՝ արդյոք դատավարության արդյունքը «վճռորոշ կլինի մասնավոր իրավունքների և պարտականությունների համար»: Օրինակ՝ *Konig v. Germany*, 28/06/1979 թ. վճիռ, գանգատ թիվ 6232/73 (ռուս.) գործով Եվրոպական դատարանը որոշեց, որ դատավարությունը, որը վերաբերում էր բժշկական կլինիկա աշխատեցնելու և դեղագործությամբ զբաղվելու լիցենզիայի սահմանափակմանը, 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում էր: Նման որոշում դատարանը կայացրեց՝ չնայած այն հանգամանքին, որ լիցենզավորող մարմնի գործունեության նպատակն էր գործել ի շահ հասարակական առողջության և բժշկի մասնագիտական պարտականություններն իրականացնել հանրության համար: *Meltex Ltd and Mesrop Movsesyan v. Armenia*, 17/06/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 32283/04 գործով դիմումը ՄԻԵԴ-ը քննության առավ 6-րդ հոդվածի ներքո, որում խնդրո առարկա հարցը նույնպես վերաբերում էր հեռուստատեսային հաղորդումների լիցենզավորման մրցույթին, որի նպատակը ոչ միայն մասնավոր, այլև հանրային կարիքներ էր հետապնդում:

Վերը նշված սկզբունքներից ելնելով՝ Եվրոպական դատարանը տարբեր գործերով 6-րդ հոդվածի պաշտպանության տակ է առել այնպիսի իրավահարաբերություններ, որտեղ խնդրո առարկա հարցեր էին բժշկական կարգապահական վարույթի իրավաչափությունը, հաշվապահի լիցենզիան վերահսկող հանձնաժողովի որոշումների օրինականությունը, փաստաբանների պալատի կողմից փաստաբանի լիցենզիան մերժելու որոշումը, խմիչք առաքելու ու մատակարարելու լիցենզիայի մերժումը և այլն: Այդուհանդերձ, «Գերագույն խորհուրդ պատգամավորական ակումբ» ՀԿ-ն ընդդեմ Հայաստանի գործով որոշմամբ ՄԻԵԴ-ը մերժեց համապետական ընտրությունների դիտորդի դիմումը ԿՀԸ-ի կողմից տեղեկատվություն չտրամադրելու հիմքով հարուցված դատա-

վարության մասով՝ գտնելով, որ վարույթի ելքը որոշիչ նշանակություն չուներ հայցվորի քաղաքացիական իրավունքների որոշման համար մասնավոր իրավունքի հիմքով: Դատարանը գտավ, որ կազմակերպությունը վիճարկում էր այնպիսի իրավունք, որը բխում էր իր՝ որպես ընտրական դիտորդ հանդես գալու կարգավիճակից, և որպես այդպիսին՝ այդ իրավունքը կրում էր ժամանակավոր բնույթ, որը գոյանում էր միայն ընտրությունների շրջանում, այսինքն՝ դա չէր կրում մշտական բնույթ, դա համընդհանուր կիրառություն չուներ, այլ սահմանափակված էր միայն մի խումբ մարդկանց շրջանակով՝ ընտրական դիտորդներով, մինչդեռ քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները 6-րդ հոդվածի հիմքով երաշխավորված են բոլորի համար և կախված չեն անձի կարգավիճակից: Նման նկատառումներից ելնելով՝ Եվրոպական դատարանը գտավ, որ սույն դատավարությունում որոշվում էին հանրային բնույթի իրավունքներ, այլ ոչ թե քաղաքացիական բնույթի մասնավոր իրավունքներ:

Թեմա 2. ՄԻԵԴ նախադեպային իրավունքում և Եվրախորհրդի այլ փաստաթղթերում ամրագրված դատական ակտերի պատճառաբանվածությանը և հիմնավորվածությանը ներկայացվող պահանջները և դրանց ապահովումը վարչական արդարադատությունում

Վարչական դատավարությունում դատական ակտերի պատճառաբանվածությանը և հիմնավորվածությանը ներկայացվող պահանջները Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով նույնն են, ինչ քաղաքացիական կամ քրեական դատավարությունում: ՀՀ-ի դեմ կայացված գործերով ՄԻԵԴ-ը այս խնդրին անդրադարձել է Meltex Ltd and Mesrop Movsesyan v. Armenia, 17/06/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 32283/04 գործով վճռում, որտեղ սահմանել է, որ թեև 6-րդ հոդվածի 1-ին մասը պարտավորեցնում է դատարաններին նշել իրենց վճիռների պատճառները, սակայն այդ պահանջը չի կարող հասկացվել որպես յուրաքանչյուր փաստարկին մանրամասն պատասխան տալու պարտավորություն: Պատճառները նշելու պարտավորության կիրառման սահմանը, ըստ դատարանի, կարող է տարբեր լինել՝ կախված դատական ակ-

տի բնույթից: Այդպիսով՝ անհրաժեշտ է հաշվի առնել փաստարկների բազմազանությունը, վարույթի բնույթը, կարգավորող օրենքները, այսինքն՝ կոնկրետ գործի հանգամանքների ներքո: Օրինակ՝ Մելտեքսի գործով Եվրոպական դատարանը որոշեց, որ վերաքննիչ բողոքը մերժելիս վերաքննիչ դատարանը կարող է, որպես կանոն, ուղղակիորեն հաստատել ավելի ցածր աստյանի դատարանի որոշման հիմնավորումները: Մելտեքսի գործով դիմումատու ընկերությունը պնդում էր, որ Տնտեսական դատարանի ու Վճռաբեկ դատարանի (խնդրո առարկա ժամանահատվածում տնտեսական գործերով առկա էր երկաստիճան դատական համակարգ) որոշումները հիմնավորված չէին, որովհետև Տնտեսական դատարանն ամբողջովին համաձայնել էր ՀՌԱՀ-ի փաստարկների հետ, իսկ Վճռաբեկ դատարանն էլ ամբողջությամբ կրկնել էր Տնտեսական դատարանի եզրահանգումները: Այդպիսին էին դիմումատու ընկերության փաստարկները դատարանում: Սակայն Եվրոպական դատարանը, մանրամասնորեն ուսումնասիրելով գործի նյութերը, պարզեց, որ երկու դատավարություններում էլ մանրակրկիտ ուսումնասիրել էին կողմերի և գրավոր, և բանավոր փաստարկները: Ավելին, դատարանը նաև տեխնիկական բնույթի եզրահանգումներ է կատարել՝ եզրահանգելով, որ առաջին գործով վճիռը պարունակում էր հինգ, իսկ երկրորդ գործով՝ երկուսուկես էջ իրավական հիմնավորումներ առ այն, թե ինչու էին դիմումատու ընկերության գանգատները չհիմնավորված: Դատարանն այնուհետև եզրահանգեց, որ այն փաստը, որ Տնտեսական դատարանն իր եզրահանգումներում համաձայնել էր կողմերից մեկի, այս դեպքում՝ ՀՌԱՀ-ի փաստարկների հետ, չէր նշանակում, որ եզրահանգումները հիմնավորված չէին: Իսկ Վճռաբեկ դատարանի մասով Եվրոպական դատարանը որոշեց, որ հաշվի առնելով, որ Վճռաբեկ դատարանի իրավասությունը սահմանափակվում էր միայն իրավունքի հարցերի ուսումնասիրությամբ, նման հանգամանքներում չէր կարելի ասել, թե Վճռաբեկ դատարանի որոշումը պատճառաբանված չէր զուտ այն պատճառով, որ վերջինս հաստատել էր ավելի ցածր աստյանի դատարանի եզրահանգումները և ներառել էր դրանք իր որոշումների մեջ:

Դատական ակտերը պատճառաբանելու պահանջը հատկապես կարևորություն է ներկայացնում արագացված դատաքննության անց-

ներու դատարանների որոշումների դեպքում: Քանի որ արագացված դատաքննության դեպքում էապես սահմանափակվում են դատավարության կողմից դատավարական երաշխիքները, և հաշվի առնելով, որ 6-րդ հոդվածով սահմանված իրավունքներն իրենց բնույթով հարաբերական (qualified) իրավունքներ են, որոնք պահանջում են հավասարակշռություն մի կողմից՝ անհատի իրավունքների, մյուս կողմից՝ հասարակության և պետության շահերի միջև, խիստ անհրաժեշտ է դատարանների կողմից ցույց տալը, որ արագացված դատաքննության անցնելը չի կատարվել դատավարության կողմի դատավարական երաշխիքների էական սահմանափակման հաշվին, որի արդյունքում արդար դատաքննության իրավունքը դատավարության կողմի համար կորցնում է իր իմաստը: *Suhadolc v. Slovenia*, 17/05/2011 թ. ընդունելիության վերաբերյալ որոշում, գանգատ թիվ 57655/08 (անգլ.) գործում ազգային դատավորը ուներ օրենքով սահմանված հայեցողություն՝ դատական քննությունը բանավոր կամ գրավոր ընթացակարգով կատարելու հարցում: Դատավորը կարող էր գրավոր ընթացակարգ սահմանել և դրա շրջանակներում հարցաքննել վկաներին այն դեպքում, երբ գտնում էր, որ վարչական մարմինը բավարար չափով չէր սահմանել փաստական հանգամանքների շրջանակները: Սա օրենքով սահմանված երաշխիք էր կամայականությունների դեմ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուն ուներ օրենքով սահմանված իրավունք բոլոր փաստարկները գրավոր եղանակով ներկայացնելու համար, Եվրոպական դատարանը գտել էր, որ նման համակարգը, որտեղ դատավորը իր հայեցողությամբ էր որոշում գրավոր կամ բանավոր ընթացակարգի անցնելու անհրաժեշտությունը, *per se* (ինքնին կամ որպես այդպիսին) չէր հակասում 6-րդ հոդվածի պահանջներին: Ի հավելումն, դատարանը նշել էր, որ գրավոր ընթացակարգով արագացված դատաքննության կարգը նպատակ էր հետապնդում արագացնելու ոչ մեծ ծանրության վարչական տույժերով գործերի քննությունը և այդպիսով բեռնաթափել դատարանները: Եվրոպական դատարանը նման նպատակը համարեց իրավաչափ և այդ կապակցությամբ նկատեց, որ դատական գործերի արագացված կարգով քննությունը կարող էր էապես ազդել նաև դատական քննության ողջամիտ ժամկետների վրա, որը նույնպես, ի թիվս

անհատական շահի, ներառում է նաև հանրային շահ: Այսինքն՝ էական հանգամանք է այն, թե օրենսդիրը կամայականությունների դեմ ինչ հակակշռող երաշխիքներ է սահմանում, և թե արդյոք սահմանափակումները եղել են ավելին, քան անհրաժեշտ է, որպեսզի արդար դատաքննության իրավունքը չիմաստագրկվի անձի համար:

Վերը նշված փաստական հանգամանքների ու իրավունքի մասին հարցերի նմանությամբ՝ ընդդեմ ՀՀ-ի վերջերս կոմունիկացվել է *Avag Gevorgyan and others v. Armenia*, 30/11/2010 թ., գանգատ թիվ 66535/10 գործը (անգլ.), որում խնդրո առարկա հարցը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի իրավաչափության հարցն է, որը թույլ է տալիս օրենսգրքի 135-րդ հոդվածով նախատեսված գործերը քննել գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործը դատարանի գնահատմամբ ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, կամ դրա բանավոր դատաքննությունը կնպաստի գործի հանգամանքների առավել արագ բացահայտմանը: Վարչական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված գործերը կառավարության որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերի հետ (բացի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից) համապատասխանությանը վիճարկելու վերաբերյալ գործերն են: Այս գործի առանձնահատկությունը այն է, որ դեռ 2012 թ. ապրիլի 11-ին ՀՀ սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-1020 որոշումով սահմանել է, որ վարչական վարույթում առկա է իրավական վակուում՝ պայմանավորված գրավոր դատաքննություն անցկացնելու համար հստակ ընթացակարգի բացակայությամբ, և նման հստակ կանոնների բացակայության պայմաններում դատարանին բացարձակ հայեցողություն է թողնված՝ որոշելու, թե կողմերն ինչպես կարող են օգտագործել իրենց ընթացակարգային իրավունքները:

ԴԱՍ 3

ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Թեմա 1. Կոնվենցիայով երաշխավորված սեփականության իրավունքի ապահովման վարչադատարարական երաշխիքները աշխարհանքային հարաբերությունների ոլորտում

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը կիրառելի է տարբեր վեճերի առնչությամբ, որոնք վերաբերում են սեփականության վրա ազդող վարչական որոշումներին, օրինակ՝ հողի վաճառքի պայմանագրի վարչական որոշմանը վերաբերող դատավարությունները, մտավոր առողջության կամ քրեական օրենքի ոլորտում կալանավորման հրամանները, որոնք ազդում են դիմումատուների՝ իրենց սեփականությանը տնօրինելու կարողության վրա, անշարժ գույքի օգտագործման իրավունքի վերաբերյալ դատավարությունները (պետական գրանցում), գյուղատնտեսական հողերի միավորման վերաբերյալ դատավարությունները, հողի սեփականագրկման և հողի վրա կառուցապատման թույլտվության վերաբերյալ դատավարությունները, համայնքային կամ պետական նշանակության հողերի նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով գույքային իրավունք ձեռք բերելու և դրանք սահմանված կարգով գրանցելու հետ կապված դատավարությունները, աճուրդով ձեռք բերված հողի օգտագործման թույլտվության վերաբերյալ դատավարությունները, փոխհատուցման վերաբերյալ դատավարությունների բազմազան տեսակները, կենսաթոշակների ու նպաստների վերաբերյալ դատավարությունները և այլն:

Վերը նշվածի համատեքստում Հայաստանի Հանրապետության դեմ մինչ այժմ կայացվել են մի շարք վճիռներ, որոնք առնչվում են անշարժ գույքի օտարմանը (Հյուսիսային պողոտայի գործերով վճիռներ), որոնք, սակայն, մեծ մասամբ քննվել են քաղաքացիական դատարաններում, և իրավահարաբերություններն էլ մեծ մասամբ քաղաքացիաիրավական են (վեճը ծագել է կառուցապատող ընկերության և գույքի սեփականա-

տերերի կամ օգտագործողների միջև): Բացի այդ՝ նշված դատավարությունները մեծ մասամբ կայացել են 2004–2009 թթ., որի ժամանակ վարչական դատարաններ և համապատասխան դատավարական հիմքեր չկային: Այդուհանդերձ, Եվրոպական դատարանը կայացրել է մի շարք որոշումներ, որոնք առնչվում են սույն թեմային: Մասնավորապես, ՄԻԵԴ–ը կայացրել է *Hayk Margaryan v. Armenia*, 04/06/2013 թ., գանգատ թիվ 72733/10 գործով (անգլ.) գործի վարույթը կարճելու մասին որոշում, որը վերաբերում էր աշխատանքային հարաբերությունների դադարեցումից հետո պաշտոնաթող դատախազի թոշակի վճարումը վերսկսելու հիմքով վարչական դատարանի՝ ուժի մեջ մտած դատական ակտի՝ ՀՀ գլխավոր դատախազության կողմից չկատարելուն (դատարանի իրավունք գույքային իրավունքի զուգակցությամբ՝ Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին մասի և թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի հիմքերով. սույն գործով վարույթը կարճվել է այն հիմքով, որ պետությունը վերացրել էր խախտումը, և գանգատի հետագա քննությունը, ըստ Կոնվենցիայի 37–րդ հոդվածի, դարձել էր աննպատակահարմար):

Կոմունիկացվել են նաև չորս պաշտոնաթող դատավորների դիմումները (*Tariel Manukyan v. Armenia*, 26/06/2013 թ., գանգատ թիվ 44326/13, *Misha Asatryan v. Armenia*, 26/06/2013 թ., գանգատ թիվ 44335/13, *Frunze Dzvakeryan v. Armenia*, 26/06/2013 թ., գանգատ թիվ 44331/13, *Lyova Gabrielyan v. Armenia*, 26/06/2013 թ., գանգատ թիվ 44338/13 (անգլ.)), որոնցում հայցվորները 6–րդ հոդվածի 1–ին մասի և թիվ 1 արձանագրության 1–ին հոդվածի հիմքերով վիճարկում են աշխատանքային հարաբերությունների դադարեցումից հետո իրենց կենսաթոշակների առնչությամբ կայացված բարենպաստ ու վերջնական դատական ակտերի բեկանմանը, վերանայմանը և դրանց արդյունքում նոր դատական ակտերի կայացմանը, որոնց արդյունքում կենսաթոշակների չափը անհամաչափորեն նվազեցվել էր: Փաստական հանգամանքների հիմքում ընկած են ոչ իրավաչափ վարչարարության մասին պնդումները: Կոմունիկացվել է նաև *Babken Tamrazyan v. Armenia*, 21/07/2010 թ., գանգատ թիվ 42588/10 դիմումը, որը վերաբերում է 25 տարի շարունակ համայնքային և պետական նշանակության հողատարածքում աշխատանքային գործունեություն ծավալելու, դրա արդյունքում հողատարած-

քի նկատմամբ վաղեմության ուժով գույքային իրավունք ձեռք բերելու և այդ իրավունքից զրկելու մասին վարչական մարմինների որոշումների անիրավաչափության պնդումներին:

Գնելու նախապատվության իրավունքին էր վերաբերում նաև ՄԻԵԴ վճիռը՝ *Melikyan v. Armenia*, 19/02/2013 թ. վճիռ, գանգատ թիվ 9737/06 գործով, որում դատարանը 6–րդ հոդվածի կիրառելիության հարցը որոշելու համար պետք է պարզեր, թե արդյոք հայցվորի կողմից հայցվող ընկերության բաժնեմասերի նկատմամբ գնելու նախապատվության իրավունքը աներկբայորեն ու հստակորեն սահմանված գույքային իրավունք էր ազգային օրենքով: Դատարանը որոշեց, որ ազգային օրենքը հստակորեն սահմանում էր ձեռնարկության աշխատակիցների՝ ձեռնարկության մասնաբաժինները գնելու նախապատվության իրավունք, և որ այդ իրավունքը հստակորեն սահմանված գույքային իրավունք էր ազգային օրենքով (տե՛ս նաև ներքևում):

Աշխատանքային հարաբերությունների կոնտեքստում Կոնվենցիայի 6–րդ հոդվածը վիճարկելիս անհրաժեշտ է նախ և առաջ հաղթահարել ընդունելիության փուլը: Սա հատկապես խնդրահարույց է այն դեպքերում, եթե հայցվորը հանրային պաշտոնյա է, կամ նրա աշխատանքային, պաշտոնական գործառույթներն իրենց բնույթով հանրային են եղել: Եվրոպական դատարանի՝ արդեն կայուն հաստատված նախադեպային իրավունքի համաձայն՝ մի կողմից՝ հանրային գործառույթներ իրականացնող պաշտոնյայի՝ քաղաքացիական ծառայողի, պաշտոնատար անձի և նույնիսկ դատավորի, և մյուս կողմից՝ հանրային մարմնի միջև աշխատանքային վեճը համարվում է քաղաքացիաիրավական բնույթի, եթե վեճի առարկան աշխատանքային բնույթի իրավահարաբերություններն են, օրինակ՝ աշխատանքից ազատելու հիմքերը (*Efendiyeva v. Azerbaijan*, 11/12/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 31556/03, §41; *Štefan Harabin v. Slovakia*, 20/11/2012 թ. վճիռ, գանգատ թիվ 58688/11, § 119 (անգլ.)): Հետևաբար, անհրաժեշտ է ցույց տալ, որ խնդրո առարկա վեճը իր բնույթով պատկանում է քաղաքացիաիրավական ոլորտին, այլ ոչ թե հանրային իրավահարաբերությունների ոլորտին: Առաջինի դեպքում դիմումը ընդունելի կհամարվի 6–րդ հոդվածի հիմքով, քանի որ հնարավոր կլինի պնդելու, որ, օրինակ՝ աշխատանքից ազատելու

մասին վարչական ակտը առնչվում էր իր աշխատանքային իրավունքին, որը հստակորեն ամրագրված քաղաքացիական իրավունք է, և որ վիճահարույց դատավարության ընթացքում որոշվում էր հայցվորի քաղաքացիական իրավունքների մասին հարց՝ նրա աշխատանքային իրավունքի մասին հարցը: Այս առումով արդեն առարկայագուրկ է այն հանգամանքը, որ հայցվորը ի պաշտոնե իրականացնում էր հանրային գործառույթներ (օրինակ՝ ոստիկանը, դատախազը կամ դատավորը):

Վերը նշված խնդիրը լուծելու համար ՄԻԵԴ-ը մշակել է երկու չափորոշիչներ, որոնց միջոցով որոշում է, թե արդյոք տվյալ պաշտոնյան կարող է վիճարկել աշխատանքային իրավունքի մասին հարց Եվրոպական դատարանում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո: Այսպիսով, ըստ Vilho Eskelinen and Others v. Finland, 17/04/2007 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 63235/00 (§ 61-62) գործով սահմանված չափորոշիչներին, 6-րդ հոդվածը կիրառելի չէ, եթե առկա են նշված երկու պայմանները. 1) ազգային օրենքը բացառում է դատարանի մատչելիությունը, 2) բացառումը պայմանավորված է պետության շահից բխող օբյեկտիվ հանգամանքով: Այս երկու չափորոշիչներից բխում է, որ զուտ այն հանգամանքը, որ անձը աշխատում է հանրային իրավունքով կարգավորվող բնագավառում, ինքնին բավարար չէ որոշելու, որ դատական վեճը իր բնույթով հանրային է:

Թեմա 2. Սեփականության իրավունքի ապահովման վարչադատարանական երաշխիքները հարկային և մաքսային հարաբերությունների ոլորտում

Հարկային և մաքսային ոլորտի վեճերի առնչությամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքների կիրառումը նախ և առաջ, ինչպես և վերևում, կախված է սույն հոդվածի ընդունելիության հարցից: Այսինքն՝ հայցվորները պետք է կարողանան նախ հիմնավորել, որ դատավարությունը իր բնույթով կամ քրեաիրավական, կամ քաղաքացիաիրավական բնույթի է՝ Կոնվենցիայի իմաստով:

Եթե փաստերը վերաբերում են հարկային կամ մաքսային գործերով անձի նկատմամբ կիրառված վարչական տույժերին, ապա առավել հավանական է, որ ընդունելիության հարցը վիճարկվի 6-րդ հոդ-

վաճի 1-ին մասի «քրեական մեղադրանք» եզրով: Մասնավորապես, Paykar Yev Haghtanak Ltd v. Armenia, 20/12/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 21638/03 գործով ՄԻԵԴ-ը սահմանել է, որ եթե անձի կամ տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ տույժերն ու տուգանքները անցնում են ընդհանուր հարկային պարտավորության 10 տոկոսը, ապա նման տույժերն իրենց բնույթով, ամենայն հավանականությամբ, քրեական մեղադրանք են՝ հաշվի առնելով նման տույժերի պատժողական նպատակը և խստության աստիճանը: Այս իմաստով ներկայումս ՄԻԵԴ-ի կողմից քննության մեջ է CHAP LTD v. Armenia, 13/03/2009 թ. գանգատ թիվ 15485/09 գործը (անգլ.), որի գրավոր դատաքննությունը ավարտվել է վերջերս, որտեղ խնդրո առարկա հարցը վարչական դատավարության ընթացքում տեղի ունեցած դատավարական խախտումներ են և ընկերության նկատմամբ անհամաչափ վարչական տույժերի սահմանումը, որոնք, ըստ ընկերության, իր գույքային իրավունքների անհամաչափ միջամտություն էր (մինչև 29 մլն դրամի չափով): Ընկերությունը ՄԻԵԴ-ում պնդում է, որ նշված գումարի մի մասը հարկային պարտավորությունն է, իսկ մյուս մասը՝ տարբեր տեսակի տույժեր ու տուգանքներ, որոնք հարկային պարտավորության մոտ 73 տոկոսն են: Այդ հիմքով ընկերությունը գտնում է, որ վարչական տույժը քողարկված քրեական մեղադրանք է՝ հաշվի առնելով պատժաչափի խստության աստիճանը:

Պատժաչափի խստության աստիճանը երեք մասից բաղկացած չափորոշիչներից երրորդն է, որը ՄԻԵԴ-ը սահմանել է՝ որոշելու տվյալ վարույթի բնույթը: Դա նույնպես մանրամասնորեն սահմանվել է Paykar Yev Haghtanak Ltd v. Armenia, 20/12/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 21638/03 գործով, ըստ որի, եթե հարկային վեճերը, որպես կանոն, 6-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական իրավունքների և պարտականությունների շրջանակից դուրս են (չնայած այն նյութական հետևանքներին, որոնք նման վեճերը կարող են առաջացնել հարկատուների համար: Սակայն, եթե նման դատավարությունը ներառում է տույժերի և տուգանքների նշանակում, այն կարող է որոշակի հանգամանքներում գրավել 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները վերջինիս «քրեական» մասի ներքո): Առավել մասնավորեցնելով՝ ՄԻԵԴ-ը սահմանել է երեք չափորոշիչներ. 1) իրավախախտման իրավական դա-

սակարգումը ներպետական օրենսդրությունում, 2) իրավախախտման բնույթը և 3) հնարավոր պատժի խստության աստիճանը: Վերջին չափորոշիչի առումով դատարանը որոշեց, որ 6–րդ հոդվածը կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ նշանակված տույժը հավասար էր հարկային պարտավորության 10 տոկոսին: Իսկ երկրորդ չափորոշիչը կիրառելիս ՄԻԵԴ–ը եզրահանգեց, որ բոլոր համապատասխան դրույթների նպատակն է ոչ թե հարկատուի գործողությունների արդյունքում հնարավոր առաջացած ծախսերի կամ վնասների նյութական հատուցումը պետությանը, այլ հարկատուների նկատմամբ ճնշում գործադրելը, որպեսզի վերջիններս կատարեն իրենց իրավական պարտավորությունները, և այդ պարտավորությունները խախտելու դեպքում նրանց պատժելը: Այս եզրահանգումն ինքնին բավարար էր (իհարկե, հաշվի առնելով նաև երրորդ չափորոշիչի վերաբերյալ եզրահանգումը վերևում), որպեսզի սահմանված վարչական տույժերը համարվեն որպես առաջադրված քրեական մեղադրանքներ՝ այս եզրույթի ինքնավար մեկնաբանության ուժով:

Վերը նշվածի մեկ այլ օրինակ է J. B. v. Switzerland, 03/05/2001 թ. վճիռ, գանգատ թիվ 31827/96 (անգլ.) գործը, որտեղ դիմումատուի դեմ հարկերի վճարումից խուսափելու համար հարկային ծառայության կողմից հայց էր հարուցվել, որոնք նրանից պահանջել էին ներկայացնել իր տրամադրության տակ գտնվող մի շարք ընկերություններում ներդրումներին վերաբերող բոլոր փաստաթղթերը: Նա ընդունել էր, որ ներդրումներ էր կատարել՝ եկամուտն առանց պատշաճ ձևով հայտարարագրելու, բայց հրաժարվել էր ներկայացնել պահանջված փաստաթղթերը: Որպես շարունակական մերժումների արդյունք՝ նրա հանդեպ երեք առանձին կարգապահական տուգանքներ էին կիրառվել՝ ընդհանուր արժողությամբ 3000 շվեյցարական ֆրանկ: Դատարանը, հաշվի առնելով կիրառված տուգանքի չափը և դրա պատժիչ բնույթը, որոշեց, որ 6–րդ հոդվածի 1–ին կետի նպատակների համար ընթացակարգը կարող էր բնութագրվել որպես «քրեական»: Թվում էր՝ իշխանությունները փորձում էին ստիպել դիմումատուին ներկայացնել իր եկամտի մասին տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր՝ դրանով ցույց տալով հարկեր վճարելու նրա պատասխանատվությունը. չէր բացառվում, որ հարկերի վճարումից խուսափելու վերաբերյալ փաստաթղթերը դատա-

վարության ընթացքում կարող էին որպես ապացույցներ օգտագործվել դիմումատուի դեմ: Հնարավոր մեղադրանքներ պարունակող փաստաթղթեր չներկայացնելու համար կիրառված տուգանքները խախտել են լռության իրավունքն ու ինքնամեղադրանք չներկայացնելու արտոնությունը, որոնք ներառված են 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված արդար դատաքննության իրավունքում:

Հարկային և մաքսային մարմինների հարաբերությունների ոլորտում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդար դատաքննության իրավունքի ողջ տարրերը գործում են: Անհնարին է պատկերացնել, որ այնպիսի հիմնարար իրավունքներ, ինչպիսին են ծանուցված լինելու, իրազեկված լինելու, պատասխանի իրավունքները և այլն, չգործեն վարչաիրավական հարաբերություններում, քանի որ հենց նշված իրավունքներով են սկսվում իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի և Սահմանադրության 19-րդ հոդվածի ներքո: Ընդ որում՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ խոսքը չի վերաբերում միայն դատական վարույթներին: ՄԻԵԴ-ը «տրիբունալ» հասկացությունը 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով մեկնաբանել է լայն՝ ընդգրկելով նաև այն վարչական մարմիններին, որոնք իրենց որոշումները կայացնում են դատավարական նվազագույն հատկանիշներով: Դա է պատճառը, որ նման մարմինները (օրինակ՝ հարկային կամ մաքսային մարմինների ներսում գործող հանձնաժողովները, որոնք վարչական վարույթի շրջանակներում կոչված են որոշումներ կայացնելու, վարչական գործ հարուցելու, վարչական տույժի ենթարկելու, գործը կարճելու և այլն) ՄԻԵԴ-ը երբեմն համեմատում է առաջին ստյանի դատարանների հետ: Այս հանգամանքով է պայմանավորված նաև, որ նման մարմինները պարտավոր են քաղաքացիների համար ապահովել նրանց նվազագույն դատավարական իրավունքները, որոնք լայնորեն ճանաչված իրավունքներ են՝ նրանց նախապես ծանուցելով, իրազեկելով, գործի նյութերը նրանց համար մատչելի դարձնելով, պատասխան կամ պնդումներ ներկայացնելու բավարար ժամանակ ու հնարավորություններ ընձեռելով, վարույթի ընթացքում ապացույցներ, պնդումներ ներկայացնելու, փաստաբան ունենալու իրավունքներ ապահովելով և այլն: Ինչպես տեսնում եք, սրանք

երաշխիքներ են, որոնք ամրագրված են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում: Ի դեպ, այս բոլոր երաշխիքները ամրագրված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում՝ ներառելով նաև այնպիսի առաջադեմ սկզբունքներ, ինչպիսին են փաստի կանխավարկածը, ex officio քննություն կատարելու, անհրաժեշտության, համաչափության և պիտանիության հիմնարար սկզբունքները:

ԴԱՍ 4

ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՄՏՔԻ, ԽՂՃԻ, ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Թեմա 1. Կոնվենցիայով երաշխավորված անձնական կյանքի հարգանքի իրավունքի ապահովման վարչադատարական երաշխիքները

Անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը հիմնարար իրավունք է՝ ամրագրված Կոնվենցիայի 8-րդ հոդվածով և ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածի համաձայն՝ անձի անձնական անձեռնմխելիությունը, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը, հեղինակության իրավունքը ոչ նյութական բարիքներ են, որոնք պաշտպանվում են օրենքով: Անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտումը որոշ հանգամանքների դեպքում առաջացնում է նաև քրեական պատասխանատվություն՝ ըստ Քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածի՝ կապված մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելու, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելու, հավաքելու ու պահելու հետ:

Անձնական կյանքի իրավունքի միջամտությունը տեղի է ունենում և՛ քաղաքացիների, և՛ վարչական մարմինների կողմից: Վերջինի դեպքում միջամտության շրջանակները գնալով լայնանում են՝ կապված նոր տեխնոլոգիաների տարածման և դրանք վարչաիրավական համակարգի հետ զուգամիտման հետ: Դրա վառ օրինակ են մեր հանրապետությունում արագորեն աճող տեսանկարահանող ու տեսալուսանկարահանող սարքերը, որոնք վերահսկվում են և՛ մասնավոր ընկերությունների, և՛ պետական մարմինների կողմից: Ընդ որում՝ հաճախ մենք տեսնում ենք, թե ինչպես հանրային նշանակության տեղեկությունները, որոնք

պարունակում են անհատական տվյալներ, հեշտությամբ ու առանց որևէ բացառության հայտնվում են մասնավոր ընկերության տիրապետման տակ, որն էլ այդ ամենը տեղադրում է իր առցանց ռեսուրսում՝ սահմանելով մատչելիության նվազագույն արգելքներ:

Վարչաիրավական տիրույթում ավելի հաճախակի են դառնում վարչական վարույթի անվան տակ քողարկված քրեական հետապնդում իրականացնելու դեպքերը: Արձանագրված են բազմաթիվ դեպքեր, երբ ոստիկանությունը կամ նրան մոտ կանգնած լրատվամիջոցը նկարահանում է քաղաքացիական ակտիվիստներին փողոցում, և պարզաբանում ներկայացնելու պահանջի դեպքում ոստիկանությունը հղում է կատարում հասարակական կարգի պահպանմանը՝ որպես նկարահանման իրավաչափ հիմք, թեև նկարահանման ժամանակ հասարակական կարգի պահպանման որևէ անհրաժեշտություն չկար: Ամենայն հավանականությամբ նկարահանումները կատարվում են ակտիվիստների նկատմամբ դոսիեներ պատրաստելու նպատակով, որն այլ կերպ հավասարազոր է քողարկված կերպով քրեական հետապնդմանը:

ՄԻԵԴ-ը իր նախադեպային իրավունքում սահմանել է հստակ վարչաիրավական երաշխիքներ վարչական մարմինների կողմից նման միջամտությունների դեմ: Shimovolos v. Russia, 21/06/2011 թ. վճիռ, գանգատ թիվ 30194/09 գործում դիմողը, ով իրավապաշտպան էր, հայտնաբերել էր, որ իր տվյալները գրանցվել էին պետական մի մարմնի կողմից վերահսկվող ինչ-որ տվյալների բազայում: Դրա արդյունքում, իրավապաշտպանի ողջ տեղաշարժը մի քաղաքից մյուս քաղաք վերահսկվում էր իշխանությունների կողմից, և հրահանգի դեպքում նրան ձերբակալում էին անկախ որևէ հիմքի առկայությունից, որպեսզի վերջինս չմասնակցեր հասարակական բողոքի ակցիաներին: Այդ ամենը փաստաթղթային հիմքով ներկայացվում էր որպես բերման ենթարկում՝ վարչական իրավախախտում կատարած լինելու կասկածի հիման վրա: ՄԻԵԴ-ը սահմանեց Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում այն հիմքով, որ դիմումատուի անունը գրանցվել էր հսկողության տվյալների բազայում, որում տեղեկատվություն էր հավաքվում Ռուսաստանի ներսում նրա տեղաշարժերի վերաբերյալ՝ գնացքով կամ ինքնաթիռով, և հետևաբար դիտարկվում է որպես միջամտություն նրա անձնական

կյանքին: Տվյալների բազայի ստեղծումն ու տեխնիկական սպասարկումը և դրա գործունեության ընթացակարգը ղեկավարվում էին նախարարական հրամանով, որը երբևէ չէր հրապարակվել և հանրությանը որևէ այլ ձևով մատչելի չէր դարձվել: Այդ պատճառով Եվրոպական դատարանը, ելնելով օրինական սկզբունքի բաղադրիչ իրավական որոշակիության սկզբունքից, գտել էր, որ ներպետական իրավունքը բավարար հստակությամբ չէր սահմանում ազգային մարմինների իրավասությունը հավաքելու և պահպանելու անհատների անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվությունը: Ավելին, դատարանը նաև որոշեց, որ օրինականության սկզբունքի երկրորդ բաղադրիչը՝ իրավական կարգավորող նորմի մատչելիության սկզբունքը, նույնպես խախտվել էր, քանի որ տվյալ դեպքում քաղաքացու իրավունքի նկատմամբ միջամտությունը կատարվել էր չհրապարակված իրավական ակտի հիման վրա:

Այսպիսով՝ վերը նշված օրինակը ցույց է տալիս, որ վարչաիրավական մեթոդներով (ինչպես նաև քրեական) անձի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը պետք է կատարվի խախտումների դեմ հստակ երաշխիքների ներքո, մասնավորապես պարզորոշ ու մատչելի իրավանորմերի հիման վրա: Այս մոտեցումը բխում է օրինականության սկզբունքից: Քանի որ արձանագրվել էր օրինականության սկզբունքի խախտում, դատարանն այլևս հարկ չհամարեց ստուգել նման տեղեկություններ հավաքագրելու նպատակի իրավաչափության ու անհրաժեշտության հարցերը:

Վարչական մարմինների կողմից անձի մասին գաղտնի կերպով անձնական բնույթի տեղեկություններ հավաքելու գործերով ՄԻԵԴ-ը ուշադրություն է դարձնում մի քանի հանգամանքների վրա, որոնցից առաջինը զոհի կարգավիճակն է: Դիմողը պետք է կարողանա փաստերի, տեղեկությունների կամ ապացույցների առատությամբ ցույց տալ, որ իր անձնական կյանքի նկատմամբ տեղի է ունեցել միջամտություն: Եթե նա չկարողանա դա հիմնավորել, կկորցնի զոհի կարգավիճակը, և դիմումը ընդունելիության փուլում *ratione personae* հիմքով կմերժվի: Սուկ այն հանգամանքը, որ դիմողին չի հաջողվել ճշտել կոնկրետ տվյալների առկայությունը, չպետք է հիմք համարվի, որպեսզի մերժվի դիմումատուի՝ 8-րդ հոդվածով պաշտպանված իրավունքի միջամտության զոհ

հանդիսանալու հանգամանքը: Եվրոպական դատարանը սահմանել է. «Ինչ վերաբերում է զոհի կոնցեպցիային, ապա անձը կարող է որոշակի պայմաններում պնդել իրավախախտման զոհ հանդիսանալու մասին՝ զուտ գաղտնի միջոցների առկայության կամ գաղտնի միջոցներ թույլատրող օրենսդրության առկայության արդյունքում, առանց ստիպված լինելու պնդել, որ նման միջոցներ իր նկատմամբ իրականում կիրառվել են (Rotaru v. Romania, 04/05/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28341/95, § 35):

Վերը նշվածն ավելի հստակորեն արտահայտվել է Կլասսի գործով վճռում: Սույն վճռով Կոնվենցիայի ընդունելիության վարույթի շրջանակներում դատարանը պետք է որոշեր, թե «արդյոք անձը պետք է զրկվի անհատական գանգատ ներկայացնելու հնարավորությունից այն դեպքում, երբ նա իրեն համարում է իր դեմ կիրառված այնպիսի միջոցների զոհ, որոնք իրենց բնույթով գաղտնի են, և այդ իմաստով անձը ի վիճակ չէ մատնացույց անելու իր դեմ ուղղված կոնկրետ միջոցները: Դատարանի կարծիքով Կոնվենցիայի արդյունավետությունը (l'effet utile) նման հանգամանքներում ենթադրում է Հանձնաժողովի մատչելիության որոշ հնարավորություն: Եթե դա այդպես չլիներ, ապա Կոնվենցիայի կատարողական մեխանիզմի արդյունավետությունն էապես կթուլանար: Հաշվի առնելով, որ Կոնվենցիան և դրա հաստատությունները հիմնվել են անձանց պաշտպանելու նպատակով, Կոնվենցիայի ընթացակարգային դրույթները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի ապահովեն անհատական գանգատների համակարգի արդյունավետությունը (Klass and others v. Germany, 06/09/1978 թ., գանգատ թիվ 5029/71, § 34 (ռու.)):

Որպեսզի որոշվի, թե արդյոք պետական մարմինների կողմից տեղի է ունեցել միջամտություն անձնական կյանքի հարգանքի իրավունքի նկատմամբ՝ 8-րդ հոդվածի իմաստով, բավական է արձանագրել, որ անհատի անձնական կյանքին վերաբերող տվյալներ հավաքվել են իշխանությունների կողմից: Եվրոպական դատարանը Amann v. Switzerland, 16/02/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 27798/95 գործով (անգլ.) կայացրած վճռում տվել է հետևյալ մեկնաբանությունը.

«Դատախազության կողմից ստեղծվել էր դիմողի անձնական կյանքին վերաբերող տվյալներ բովանդակող քարտ և պահպանվել Դաշնային քարտադարանում: Այդ կապակցությամբ դատարանը չպետք է ենթադրություններ անի, թե արդյոք հավաքված տեղեկությունը կարողունակ էր բացասական ազդեցություն ունենալ, թե ոչ, և թե արդյոք դիմողի համար ծագել է որևէ բացասական հետևանք: Բավական է արձանագրել, որ անհատի անձնական կյանքին վերաբերող տվյալները հավաքվել են իշխանությունների կողմից. սա բավարար հիմք է եզրակացնելու, որ տվյալ դեպքում վիճահարույց քարտի ստեղծումն ու պահպանումը Ց-րդ հոդվածի իմաստով դիմողի անձնական կյանքի հարգանքի իրավունքի նկատմամբ միջամտություն է»:

Քննության առարկա է նաև, թե արդյոք անձին հնարավորություն է տրվել հերքելու գաղտնի միջոցների արդյունքում հավաքված տվյալները: (Տե՛ս Rotaru v. Romania, 04/05/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28341/95, § 46: Տե՛ս նաև Leander v. Sweden, 26/03/1987 թ. վճիռ, գանգատ թիվ 9248/81 (ռու.), § 48): Եթե նման դատավարական հնարավորություն չի տրվել, օրինակ՝ օրենսդրական մեխանիզմների բացակայության կամ վարչական մարմինների կողմից կամայականությունների արդյունքում, այս դեպքում նույնպես կսահմանվի անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտում՝ դրա դատավարական բաղադրիչի ներքո:

Թեմա 2. Կոնվենցիայով երաշխավորված մտքի, խղճի, կրոնի ազատության ապահովման վարչադատավարական երաշխիքները

Համաձայն ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի՝ «յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք»: Կրոնական ազատությունները նման եզրույթներով սահմանված են նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում (հոդվ. 9) և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (հոդվ. 18):

Նշված երեք կատեգորիաները հավաքական կերպով ներկայացվում են որպես կրոնական համոզմունքի ազատության իրավունք: Այս իրավունքը ունի երկու տիրույթ. կրոնական համոզմունք ունենալու

իրավունքը (forum internum) և կրոնական համոզմունքը արտահայտելու իրավունքը (forum externum): Առաջինը ենթակա չէ որևէ սահմանափակման: Ուստի, ցանկացած միջամտություն այս տիրույթում ինքնին հանգեցնում է խախտման (օրինակ՝ համոզմունքը փոխելուն ուղղված հարկադրանքը պետական մարմնի կողմից կամ հանրային պարսավանքը հանրային պաշտոնյայի կողմից): Միջամտությունը թույլատրվում է forum externum տիրույթում՝ կրոնական համոզմունքը արտահայտելու տիրույթում:

Միջազգային իրավունքում ճանաչվում է կրոնական համոզմունքը արտահայտելու չորս եղանակ.

ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ հրապարակավ կամ մասնավոր կարգով **ուսուցման, քարոզի**, եկեղեցական **արարողությունների** կամ պաշտամունքի այլ **ծիսակատարությունների** միջոցով արտահայտելու...ազատություն:

Վերը նշված իրավունքները ապահովելու համար ազգային օրենսդրությունը սահմանում է մի շարք դատավարական երաշխիքներ, որոնք, որպես կանոն, արտահայտվում են մի շարք ոլորտներում: Առաջինը կրոնական կազմակերպության գրանցման վարչաիրավական երաշխիքներն են: Միջազգային նորմերը պահանջում են, որպեսզի կրոնական միավորման (կազմակերպություն կամ անձանց խումբ) անդամների համոզմունքների ազատության կամ դրանք արտահայտելու իրավունքը կախված չլինի պետական գրանցման հանգամանքից: ՀՀ Սահմանադրությունում և միջազգային համաձայնագրերում խղճի, մտքի և դավանանքի իրավունքը չի պայմանավորվում պետական գրանցում արված լինելու հանգամանքով: Կրոնական կազմակերպություններն իրենց ցանկությամբ կարող են գրանցվել իրավական կարգավիճակ ստանալու համար, որը նրանց հնարավորություն կտա իրականացնելու այնպիսի գործողություն, որի համար անհրաժեշտ կլինի ունենալ կարգավիճակ (օրինակ՝ հրատարակչային գործունեություն): Այս սկզբունքն ամրագրված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում: Մասնավորապես, Masaev v.

Moldova, 12/05/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 6303/05 գործով, § 26, դատարանը նշել է.

Դատարանը չի վիճարկում պետության իրավունքը՝ սահմանելու կրոնական միավորման գրանցվելու պահանջ Կոնվենցիայի 9-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված պահանջների ներքո: Այդուհանդերձ, դրանից չի հետևում, ինչպես կառավարությունն է պնդում, որ Կոնվենցիային համահունչ կլինի, եթե պետությունը պատասխանատվության ենթարկի չգրանցված կրոնական միավորման անհատ անդամներին՝ աղոթելու կամ իրենց կրոնական համոզմունքներն այլ կերպ արտահայտելու համար: Հակառակն ընդունելը կնշանակի բացառել պետության կողմից չգրանցված կրոնական փոքրամասնությունների համոզմունքները, որն էլ արդյունքում կնշանակի ընդունելը, որ պետությունը կարող է թելադրել, թե ինչ համոզմունք պետք է անձը ունենա:

Կրոնական կազմակերպության և միավորման այնպիսի իրավունքներ, ինչպիսին են հավաքվելը, ծիսակատարություններ կատարելը, կրոնն ուսումնասիրելը և այլն, չեն կարող սահմանափակվել զուտ այն պատճառով, որ նրանք հրաժարվում են գրանցվել: Սահմանափակները կարող են արդարացված լինել միայն այն դեպքում, երբ պահանջվում է իրավական կարգավիճակից բխող գործունեություն, օրինակ՝ զույքի ձեռքբերում ու ամրագրում, տպագրություն, հրատարակչական գործունեություն, ուսումնական ծրագրերի իրագործում և այլն:

Կամայականությունների դեմ կարևոր երաշխիք է նաև օրինականության սկզբունքը, որի բառացի սահմանումը օրենքում անհրաժեշտություն է: Սակայն անհրաժեշտ է օրինականության սկզբունքը կիրառել դրա երկու որակական հատկանիշների ներառմամբ. օրենքի որոշակիությունը և մատչելիությունը:

Իրավունքի գերակայության սկզբունքի կիրառության կարևորագույն երաշխիք է «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» հիմնարար սկզբունքը: ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածի սահմանափակումների բաժնում այս սկզբունքը չի նշվում, որը նկատելիորեն թուլացնում է իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունը: Նշված սկզբունքը անհրաժեշտության, համաչափության,

միջոցի ու նպատակի միջև ռացիոնալ կապի մասին հիմնարար սկզբունքների արտահայտումն է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել մարդու իրավունքների որևէ ոլորտ: Այս սկզբունքը թույլ է տալիս հեռանալ միջամտության հիմնավորման լեգիտական եղանակներից և իրերը գնահատել՝ քաղաքացու հիմնարար իրավունքներին տալով օրենքի տառի, օրենսդրական կարգավորման նկատմամբ գերապատվություն՝ այդպիսով ապահովելով իրավունքի գերակայության սկզբունքի կիրառման համար անհրաժեշտ հիմքերը: ՀՀ համակարգում, բացի Կոնվենցիայից, միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում են ամրագրված անհրաժեշտության, համաչափության հիմնարար սկզբունքները: Դա նշանակում էր, որ սկզբունքորեն հնարավոր է կրոնական համոզմունքների միջամտության համաչափության հարցը վիճարկել ներպետական մակարդակում՝ հիմնվելով իրավունքի գերակայության, այլ ոչ թե օրենսդրական կարգավորումների վրա:

ԴԱՍ 5

ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ. ԽՈՍՔԻ, ԽԱՂԱՂ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԵՎ
ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ, ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԳԵԼՔԸ

Թեմա 1. Կոնվենցիայով երաշխավորված խոսքի, խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքների ապահովման վարչադատարական երաշխիքները

Խոսքի ազատության ու խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքները սահմանված են Կոնվենցիայի 10–րդ և 11–րդ հոդվածներով: 11–րդ հոդվածով սահմանված իրավունքը 10–րդ հոդվածով պաշտպանված իրավունքների դրսևորման առանձնահատուկ ձև է (lex specialis), իսկ վերջինս՝ lex generalis 11–րդ հոդվածի նկատմամբ: Հետևաբար, թեև երկու հոդվածները հանդես են գալիս ինքնուրույն և ունեն կիրառելիության առանձին ոլորտներ, հաճախ դրանք քննվում են մեկ համակցության մեջ (Galstyan v. Armenia, 15/11/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 26986/03, § 95–96):

Եվրոպական դատարանը նշել է, որ 10–րդ հոդվածով սահմանված երաշխիքները տարածվում են բոլորի վրա: Այդ իմաստով Կոնվենցիայի 1–ին հոդվածը նշում է, որ պետությունը պարտավոր է իր իրավազորության տակ գտնվող «յուրաքանչյուրի համար» ապահովել Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները: (Տեն Vogt v. Germany, 26/09/1995 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 17851/91, § 43 (ռու.): Տեն նաև Ahmed and others v. The United Kingdom, 02/09/1998 թ. վճիռ, գանգատ թիվ 22954/93 (ռու.), § 41): Նշվածից բխում է, որ խաղաղ հավաքների իրավունքը տարածվում է նաև «խաղաղ հավաքների» մասնակցող, և հավաքները կազմակերպող անձանց վրա: Սույն իրավունքը տարածվում է նաև քաղաքական կուսակցությունների վրա:

Վերը նշված իրավունքների միջամտության հարցը լուծելիս Եվրոպական դատարանը առաջին հերթին հաշվի է առնում մի շարք հանգա-

մանքներ (այս հանգամանքները պետք է հաշվի առնեն նաև վարչական մարմինները ներպետական մակարդակում, քանի որ նրանք կոչված են կիրառելու նաև Եվրոպական կոնվենցիան՝ որպես ներպետական իրավունքի բաղկացուցիչ մաս), որոնք են.

- Արդյո՞ք կարգավորող (վարչական) մարմնի կողմից հանրահավաքն անցկացնելը մերժելու մասին որոշումը կայացվել է միջոցառման համար նախատեսված օրվանից: Այդ դեպքում արձանագրվում է, որ որոշումը սահմանված ժամկետում չի կայացվել:
- Արդյո՞ք վարչական մարմնի որոշումը պատճառաբանված է, թե՛ որոշմամբ, օրինակ, վկայակոչված է միայն կարգավորող նորմը՝ առանց փաստերի վերլուծության ու փաստարկների տրամադրման:
- Արդյո՞ք վարչական մարմինը ապահովել է հանրահավաքի կազմակերպչի կամ հայտ ներկայացրած անձի ներկա գտնվելն իրազեկման քննարկումներին:
- Արդյո՞ք դատական մարմինները, որոնք կոչված են դատական հսկողություն սահմանելու վարչական մարմնի որոշումների օրինականության և իրավաչափության վրա, կայացրել են պատճառաբանված որոշում՝ օրինակ.
 - դատարանը չի անդրադարձել վարչական մարմնի կողմից դիմող անձի՝ «լսված լինելու իրավունքի» չափահավման հարցին,
 - սահմանված 72 ժամվա ընթացքում վարչական ակտը ընդունած չլինելու հարցին,
 - դիմող անձի՝ «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակարգում» չափանիշին չհամապատասխանելու հիմքերով անվավեր ճանաչելու փաստարկներին,
 - չի պարզաբանել, թե ինչու չի անդրադարձել վերը նշված հարցերին:
- Արդյո՞ք հանրահավաքի կազմակերպիչները կամ դիմումատուները, այնուամենայնիվ, կարողացել են անցկացնել արգելված հանրահավաքը և երթը:
- Նույնիսկ եթե կարողացել են իրականացնել իրենց իրավունքները, և հանրահավաքն ու երթը կայացել են, հաշվի պետք է առնել նաև այն հանգամանքը, որ իրավունքների իրականացումը կատարվել է ռիսկի առկայության պարագայում, քանի որ հանրահավաքի

անցկացումը պաշտոնապես արգելված էր: Այսինքն՝ իրավունքների իրականացնելը կատարվել է առանց լեգիտիմության կանխավարկածի, մինչդեռ նման կանխավարկածը էական հատկանիշ է հավաքների և ազատ արտահայտվելու իրավունքը արդյունավետ կերպով և առանց խոչընդոտների իրականացնելու համար:

- Նման պարագայում իշխանությունների կողմից թույլտվություն տալուց հրաժարվելը կարող էր «սառեցնող ազդեցություն» (chilling effect) գործել կազմակերպիչների և մյուս անձանց վրա, ովքեր մասնակցել էին հանրահավաքին: Դա կարող է մարդկանց հետ պահել հանրահավաքին մասնակցելուց այն հիմքով, որ հանրահավաքին մասնակցելու համար նրանք չունեին պաշտոնական թույլտվություն և, այդպիսով, չէին կարող հայցել իշխանությունների պաշտպանությունը մեկ այլ հանրահավաքի թշնամաբար տրամադրված մասնակիցների կողմից:
- Իրավական պաշտպանության մեխանիզմներն իրենց ամբողջության մեջ չեն բարելավել անձի վիճակը

Վերը նշված պնդումների առումով տե՛ս *Baczowski and others v. Poland*, 03/05/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 1543/06, § 65–68:

Որքան էլ 10–րդ հոդվածով պաշտպանված ազատ արտահայտվելու և անձնական կարծիքի ազատությունը 11–րդ հոդվածով սահմանված խաղաղ հավաքների իրավունքի նպատակներից մեկն է, այնուամենայնիվ խաղաղ հավաքների ազատության իրավունքի իրացման համար էական նշանակություն ունի պլանավորած հանրահավաքի տեղի, օրվա, ժամի վերաբերյալ տեղեկատվության տարածումը: Առանց հանրահավաքի տեղի, օրվա, ժամի վերաբերյալ տեղեկատվություն ունենալու, դրան մասնակցելու մասին որոշում չեն կարող կայացնել հնարավոր մասնակիցները, և խաղաղ հավաքների ազատության իրավունքը կիմաստազրկվի: Այսինքն՝ խաղաղ հավաքների ազատության իրավունքը կիմաստազրկվի, եթե դրա կազմակերպիչները զրկված լինեն Կոնվենցիայի 10–րդ հոդվածով երաշխավորված իրավունքի իրացմամբ հանրահավաքի տեղի, օրվա, ժամի վերաբերյալ տեղեկատվություն տարածելուց: Այդ իմաստով անհրաժեշտ է, որպեսզի իշխանություններն ապահովեն, որ հանրահավաքի կազմակերպիչը կարողանա զանգվա-

ծային լրատվության (և հատկապես հանրային լրատվության), ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներով անձամբ կամ այլոց միջոցով տեղեկատվություն տարածելու հրապարակային միջոցառման օրվա, ժամի, վայրի, նպատակների, ընթացակարգի մասին, ինչպես նաև կոչ անելու այդ միջոցառմանը մասնակցելու համար:

Միջամտությունը կհանդիսանա 11-րդ հոդվածի խախտում, եթե այն չլինի «նախատեսված օրենքով», չհետապնդի երկրորդ պարբերությանը նախատեսված մեկ կամ մի քանի իրավաչափ նպատակ և չլինի «անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակներին հասնելու համար (Mkrtchyan v. Armenia, 11/02/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 6562/03, § 38):

Օրինականության սկզբունքի սահմանումը տրվել է ՄԻԵԴ-ի կողմից վերը նշված Mkrtchyan v. Armenia, 11/02/2007 թ., գանգատ թիվ 6562/03 գործով վճռում (§ 39), ըստ որի (ներկայացնենք համառոտ)՝ օրենք ասելով՝ նկատի է առնվում առաջին հերթին ազգային օրենսդրական կարգավորող նորմի առկայությունը, ինչպես նաև օրենքի երկու որակական հատկանիշներ՝ օրենքի մատչելիություն (գաղտնի, չհրապարակված նորմատիվ իրավական ակտերի բացառում) և հստակության (կանխատեսելիության, իրավական որոշակիության) սկզբունքները: Իսկ ինչ վերաբերում է անհրաժեշտ ժողովրդավարական հասարակություն սկզբունքին, ապա այս սկզբունքի արտահայտումը ՀՀ ներպետական օրենսդրական համակարգում առկա է միայն «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ գլխի 8-րդ հոդվածում:

Նման գործերում կարևոր են ապացուցման սկզբունքները (ապացույց հասկացությունը, ապացույցի ստանդարտը, ապացույցի բեռը), որոնք որոշ ասպեկտներով նման են վարչական դատավարությունում ապացուցման սկզբունքներին: Այսպես, Կոնվենցիայի վարույթում ապացույցը գնահատելիս Դատարանը կարող է առաջնորդվել *affirmanti, non neganti, incumbit probatio* սկզբունքով (ապացուցման բեռը կրում է ոչ թե նա, ով պնդում է, այլ նա, ով հերքում է (Makhmudov v. Russia, 26/07/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 35082/04, § 68 (անգլ.)): Ինչ վերաբերում է ապացույց հասկացությանը, ապա, ըստ ՄԻԵԴ-ի,

ապացույցը կարող է ստացվել բավականաչափ հիմնավոր, պարզորոշ և համահունչ եզրահանգումների ամբողջությունից կամ նմանօրինակ անհերքելի փաստերի կանխավարկածից: Որոշ հանգամանքներում պատասխանող պետությանն է միայն մատչելի այն տեղեկատվությունը, որով հնարավոր է հաստատել կամ հերքել կոնկրետ պնդումները: Եթե կառավարությունը առանց բավարար պատճառաբանության նման տեղեկություն չի ներկայացնում, ապա դա կարող է հիմք հանդիսանալ, որպեսզի Դատարանի եզրահանգումը ուղղվի ի օգուտ դիմողի պնդումների հիմնավորված լինելուն (Makhmudov v. Russia, 26/07/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 35082/04, § 68 (անգլ.)): Նշված մոտեցումներին որոշ աղերսներ ունի «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված փաստի կանխավարկած հասկացությունը, համաձայն որի՝ «վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել»:

Թեմա 2. Կոնվենցիայով երաշխավորված խտրականության արգելքի ապահովման վարչադատավարական երաշխիքները

Խտրականության արգելքը սահմանված է ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով, նույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածով և միջազգային (մասնավորապես ՄԱԿ-ի համակարգի) մի շարք կոնվենցիաներով, ինչպես, օրինակ՝ «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (հոդվածներ 2, 20 և 26), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով (հոդվ. 2), Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով (հոդվ. 2) և այլն:

Խտրականության արգելքի վարչադատավարական երաշխիքների մասին խոսելիս առաջին հերթին պետք է նկատի ունենալ, որ ՀՀ օրենսդրությունը չունի խտրականության արգելքի մասին առանձին, ինքնուրույն օրենք: Դրա փոխարեն խտրականության բացառման մասին բազմաթիվ իրավանորմեր ստանդարտ ձևակերպումներով սահ-

մանված են բազմաթիվ օրենսդրական ակտերում, որոնցից յուրաքանչյուրը կարգավորում է միայն այն ոլորտը, որի համար ընդունված է տվյալ իրավական ակտը: Այս հանգամանքը նկատելիորեն բարդացնում է իրավական պաշտպանության արդյունավետության հարցը: Անձը, ով որոշել է հայցել իրավական պաշտպանություն, պետք է հիմնվի մեկ կամ երկու ընդհանուր բնույթի օրենսդրական դրույթների վրա, որոնք թեև տվյալ ոլորտի համար սահմանում են խտրականության արգելքի սկզբունք, սակայն չեն տրամադրում իրավական պաշտպանության մեխանիզմներ:

Վերը նշվածից բացառություն է միայն «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը, որն ընդունվել է վերջերս, և որը թեև կարգավորում է բացառապես խտրական վերաբերմունքի իրավահարաբերություններ, սակայն վերաբերում է միայն գենդերի հատկանիշով խտրականությանը: Մինչդեռ խտրականությունը կարող է դրսևորվել բազմաթիվ այլ պաշտպանված հատկանիշներով (օրինակ՝ ազգություն, քաղաքացիություն, մաշկի գույն, գույքային վիճակ և այլն՝ ըստ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածի):

Երկրորդ խնդիրը, որ պետք է հաշվի առնել խտրականության գործերով վարչադատավարական երաշխիքների մասին խոսելիս, այն է, որ ապացույց հասկացությունը նման գործերով ունի բոլորովին այլ հատկանիշներ: Այդ մասին մասամբ խոսվեց վերևում՝ 1-ին թեմայի շրջանակներում՝ վկայակոչելով *Makhmudov v. Russia*, 26/07/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 35082/04, § 68 (անգլ.) գործը: Ապացույց հասկացության նույն սահմանումը գործում է խտրականության գործերով, իսկ ապացույցի ստանդարտ «ողջամիտ կասկածից վեր» ստանդարտն է, որը սահմանված չէ ՀՀ օրենսդրական համակարգում: Սակայն վարչական արդարադատությունում, ի տարբերություն քրեական և քաղաքացիական իրավունքների ոլորտների, ընդունված են որոշ նորմեր, որոնք կարող են զգալիորեն նպաստել, որպեսզի հայցվորները խտրականության գործերով ունենան իրավական պաշտպանության միջոցներ: Մասնավորապես, ինչպես արդեն նշվեց վերևում, քանի որ խտրականության գործերով փաստի կանխավարկած հասկացությունը կիրառելի է, նշա-

նակում է, որ «Վարչարարության հիմունքների ու վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պաշտպանության միջոցը միանշանակորեն պետք է կիրառելի լինի խտրականության գործերով: Այս հոդվածը սահմանում է փաստի հավաստիության կանխավարկածը, համաձայն որի՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

10-րդ հոդվածը շատ կարևոր երաշխիք է պարունակում. դա հնարավորություն է տալիս հայցելու պաշտպանություն՝ չունենալով ապացույցներ, այլ միայն փաստերի առատություն, որի ամբողջությունից կարելի է բխեցնել հետևություն, որ տեղի է ունեցել խտրականություն: Նման մոտեցումը բխում է ապացույցի վերը նշված սահմանումից: Բայց եթե ազգային դատարանները չընդունեն մտահանգումը որպես ապացույց, առնվազն գոնե կարելի է հիմնավոր պնդումներ ներկայացնել փաստի կանխավարկածի հիմքով: Իհարկե, հարցը, թե 10-րդ հոդվածի սկզբունքը կաշխատի, թե ոչ, կախված է առաջին հերթին դատարաններից, թե ինչպես կիրականացվի դատական ստուգումը: Վերը նշվածի համատեքստում վարչադատավարական կարևոր երաշխիք է նաև Վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածում ամրագրված ապացույցի ազատ գնահատման սկզբունքը: Նման սկզբունք իրավունքի այլ ոլորտների դատավարական ակտերում չի սահմանվում:

Խտրականության արգելքի մասին առանձին օրենքի բացակայությունը նաև հանգեցնում է մի այնպիսի իրավիճակի, երբ վարչական արդարադատությունը կարող է նույնիսկ հասու չլինել քաղաքացուն այն հիմքով, որ սահմանված օրենքներով չկան խտրականության արգելքի շատ նյութաիրավական հիմքեր: Օրինակ, եթե դպրոցի դասատուին ազատում են աշխատանքից զուտ այն պատճառով, որ վերջինս իրավախախտումների վերաբերյալ հաղորդումներ է ներկայացրել պատկան մարմիններին, դասատուի դեպքում հնարավոր չէ պնդել, որ ենթարկվել է վիկտիմիզացիայի, քանի որ նման նյութաիրավական հիմք (որպես խտրականության տեսակ) չի սահմանվում օրենքով: Նույնը վերաբերում է նաև բազմաթիվ այլ սկզբունքների: Այս իմաստով անհրաժեշտ

Է ընդունել խտրականության արգելքի մասին առանձին օրենք, ինչպես նաև անհրաժեշտ փոփոխություններ կատարել քաղաքացիական դատավարական և վարչական դատավարական օրենսդրության մեջ: Այդ դատավարական փոփոխությունները պետք է հաշվի առնեն խտրականության վերաբերյալ գործերով ապացուցման բեռի բաշխման և ապացուցման ստանդարտի առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հանձնարարվող փաստաթղթեր (իրավական և դատական ակտեր)

Ա) Իրավական ակտեր

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք
3. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք

Բ) Դատական ակտեր

1. Bayatyan v. Armenia, 07/07/2011 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 23459/03:
2. Galstyan v. Armenia, 15/11/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 26986/03:
3. Sefilyan v. Armenia, 02/10/2012 թ. վճիռ, գանգատ թիվ 22491/08:
4. Mkrtchyan v. Armenia, 11/02/2007 թ. վճիռ, գանգատ թիվ 6562/03:
5. Sapeyan v. Armenia, 13/01/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 35735/03:
6. Khachatryan v. Armenia, 01/12/2009 թ. վճիռ, գանգատ թիվ 31761/04:
7. Sarukhanyan v. Armenia, 27/05/2008 թ. վճիռ, գանգատ թիվ 38978/03:
8. Tigran Alaverdyan v. Armenia, 24/08/2010 թ. գանգատ թիվ 4523/04 (անգլ.):
9. Hayk Margaryan v. Armenia, 04/06/2013 թ. վճիռ, գանգատ թիվ 72733/10 (անգլ.):
10. Rotaru v. Romania, 04/05/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 28341/95:
11. Klass and others v. Germany, 06/09/1978 թ., գանգատ թիվ 5029/71 (ռու.):
12. Amann v. Switzerland, 16/02/2000 թ. Մեծ պալատի վճիռ, գանգատ թիվ 27798/95 (անգլ.):

2. Գրականություն (ուղեցույցներ, ձեռնարկներ և ընթերցանության նյութեր)

1. Աիդա Գրգիչ, Զվոնիմիր Մատազա, Մատիա Լոնգար և Անա Վիլֆան, Սեփականության իրավունքը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և դրա արձանագրությունների իրականացման ուղեցույց, Ձեռնարկներ մարդու իրավունքների վերաբերյալ, թիվ 10, Երևան, «Անտարես», 2008:

2. Էլիսբեր Մոուբրեյ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Գործեր և նյութեր, Երկրորդ հրատարակչություն, Երևան, «Բավիդ», հրատարակչություն, 2010:

3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան, Ոստմնական նյութերի ժողովածու, Կազմող և գլխավոր խմբագիր՝ Վիգեն Քոչարյան, Երևան, 2007:

4. Եվրոպայի խորհուրդը, համառոտ գիտական հոդված՝ պատրաստված ԵԽ գրասենյակի կողմից, <http://www.coe.int/hy/web/yerevan/the-coe/about-coe/overview>

5. 50 հարցեր ՄԻԵԿ-ի վերաբերյալ հարցերում, ուղեցույց, http://www.echr.coe.int/Documents/50Questions_HYE.pdf

3. Դասընթացի համար մշակված հատուկ ուսումնական նյութեր, ձեռնարկներ և ընթերցվող նյութեր

1. Վարչական արդարադատությունը Կոնվենցիայի ներքո (Power Point)
2. Պատասխանի մի քանի հնարավոր տարբերակներով թեստեր:
3. Իրավիճակային խնդիրներ

4. Համացանցային էջեր

1. <http://www.coe.int/aboutCoe/index.asp?page=quisommesnous&l=en>
2. http://www.echr.coe.int/Documents/50Questions_HYE.pdf
3. www.echr.coe.int

4. www.coe.am
5. www.justice.am
6. www.arlis.am
7. <http://www.concourt.am/>
8. <http://hudoc.echr.coe>

Արտակ Ջեյնալյան

**ՄԻԵԴ
ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Տպագրվել է «ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ-ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Հեռապատճեն՝ (+37410) 23-25-95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am